# Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2014 թվականի մայիսին

**(վերլուծություն)**

2014 թվականի մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 17980 գործարք, որոնց քանակը 2014 թվականի ապրիլի համեմատ նվազել է 3.7 %-ով, իսկ 2013 թվականի մայիսի համեմատ՝ աճել 26.3 %-ով:

2014 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2014 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2014 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4631 օտարման գործարքների 78.0 %-ը կազմել է առուվաճառքը, 21.2 %-ը՝ նվիրատվությունը և 0.8 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 40.0 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 36.4 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2014 թվականի մայիսին, 2014 թվականի ապրիլի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 5.1 %-ով, իսկ 2013 թվականի մայիսի համեմատ՝ 45.1 %-ով:

2014 թվականի մայիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 62.4 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2014 թվականի մայիսին, 2014 թվականի ապրիլի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.5 %-ով, իսկ 2013 թվականի մայիսի համեմատ՝ աճել 65.7 %-ով:

2014 թվականի մայիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | մայիս 2013 թ. | մայիս 2014 թ. | ապրիլ 2014 թ. |
| **Կենտրոն** | 428000 | 428000 | 428000 |
| **Արաբկիր** | 355500 | 356600 | 356600 |
| **Քանաքեռ-Զեյթուն** | 282300 | 282700 | 282700 |
| **Նոր Նորք** | 251000 | 252500 | 252500 |
| **Ավան** | 259100 | 260200 | 260200 |
| **Էրեբունի** | 248500 | 250850 | 250600 |
| **Շենգավիթ** | 254250 | 256100 | 256100 |
| **Դավթաշեն** | 274200 | 275150 | 275150 |
| **Աջափնյակ** | 247200 | 249600 | 249600 |
| **Մալաթիա-Սեբաստիա** | 239000 | 242000 | 242000 |
| **Նուբարաշեն** | 151500 | 155800 | 155100 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի մայիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2013 թվականի մայիսի համեմատ աճել են 0.04%-ով:

2014 թվականի մայիսին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 359 բնակարան, որոնց քանակը, 2014 թվականի ապրիլի համեմատ, նվազել է 12.2 %-ով, իսկ 2013 թվականի մայիսի համեմատ՝ աճել 11.5 %-ով:

2014 թվականի մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով,

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | մայիս 2013 թ. | մայիս 2014 թ. | ապրիլ 2014 թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 114800 | 116000 | 115800 |
| | Ապարան | 56550 | 57450 | 57450 |
| | Թալին | 64000 | 65850 | 65850 |
| Արարատ | Արտաշատ | 94800 | 96500 | 96000 |
| | Մասիս | 115000 | 115550 | 115000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Վեդի | 99300 | 100700 | 100500 |
| | Արարատ | 75100 | 75400 | 75400 |
| Արմավիր | Վաղարշապատ | 154000 | 154150 | 154150 |
| | Արմավիր | 121000 | 121200 | 121200 |
| | Մեծամոր | 87500 | 87500 | 87500 |
| Գեղարքունիք | Սևան | 99150 | 99200 | 99200 |
| | Գավառ | 59000 | 59800 | 59800 |
| | Մարտունի | 107600 | 107650 | 107650 |
| | Վարդենիս | 44300 | 44800 | 44800 |
| | Ճամբարակ | 27500 | 28700 | 28700 |
| Լոռի | Վանաձոր | 88300 | 88400 | 88400 |
| | Ստեփանավան | 74500 | 74500 | 74500 |
| | Սպիտակ | 99800 | 99800 | 99800 |
| | Ալավերդի | 55000 | 55000 | 55000 |
| | Տաշիր | 47000 | 47300 | 47300 |
| | Թումանյան | 11000 | 11000 | 11000 |
| | Շամլուղ | 8000 | 8000 | 8000 |
| | Ախթալա | 20000 | 20200 | 20200 |
| Կոտայք | Աբովյան | 155000 | 155100 | 155100 |
| | Նոր Հաճն | 128500 | 128600 | 128600 |
| | Բյուրեղավան | 108100 | 108150 | 108150 |
| | Եղվարդ | 109300 | 109400 | 109400 |
| | Հրազդան | 63800 | 63800 | 63800 |
| | Ծաղկաձոր | 292500 | 292500 | 292500 |
| | Չարենցավան | 85500 | 85500 | 85500 |
| Շիրակ | Գյումրի | 109300 | 109300 | 109300 |
| | Արթիկ | 66300 | 66700 | 66700 |
| | Մարալիկ | 40100 | 40700 | 40700 |
| Սյունիք | Գորիս | 121000 | 122000 | 122000 |
| | Կապան | 92100 | 92500 | 92500 |
| | Սիսիան | 91100 | 91150 | 91150 |
| | Մեղրի | 80050 | 80900 | 80900 |
| | Ագարակ | 46000 | 46900 | 46900 |
| | Քաջարան | 94300 | 94650 | 94650 |
| | Դաստակերտ | 8000 | 8000 | 8000 |
| Վայոց ձոր | Վայք | 94600 | 95000 | 95000 |
| | Եղեգնաձոր | 123050 | 125500 | 125500 |
| | Ջերմուկ | 112050 | 112900 | 112900 |
| Տավուշ | Դիլիջան | 113100 | 113150 | 113150 |
| | Իջևան | 118100 | 118300 | 118300 |
| | Բերդ | 60000 | 60200 | 60200 |
| | Նոյեմբերյան | 49300 | 49900 | 49900 |
| | Այրում | 31500 | 31850 | 31850 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 $մ^2$ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013 թվականի մայիսի համեմատ մնացել են անփոփոխ:

2014 թվականի մայիսին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 418 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 114 գործարք, մարզերում՝ 304 գործարք: 2014 թվականի մայիսին, 2014 թվականի ապրիլի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 5.4 %-ով, ընդ որում, Երևանում 5.8 %-ով, իսկ մարզերում՝ 5.3 %-ով: 2014 թվականի մայիսին 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 25.9 %-ով, ընդ որում, Երևանում 37.3 %-ով, իսկ մարզերում ՝ 22.1 %-ով:

2014 թվականի մայիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | մայիս 2013 թ. | մայիս 2014 թ. | ապրիլ 2014 թ. |
| **Կենտրոն** | 476100 | 476100 | 476100 |
| **Արաբկիր** | 383000 | 383000 | 383000 |
| **Քանաքեռ-Զեյթուն** | 295000 | 295000 | 295000 |
| **Նորք-Մարաշ** | 319200 | 319200 | 319200 |
| **Ավան** | 270500 | 270500 | 270500 |
| **Էրեբունի** | 239500 | 239750 | 239500 |
| **Շենգավիթ** | 255000 | 255000 | 255000 |
| **Դավթաշեն** | 276000 | 276000 | 276000 |
| **Աջափնյակ** | 250050 | 250050 | 250050 |
| **Մալաթիա-Սեբաստիա** | 238000 | 238000 | 238000 |
| **Նուբարաշեն** | 150500 | 150800 | 150500 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի մայիսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2013 թվականի մայիսի համեմատ աճել են 0.03%-ով:

2014 թվականի մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | մայիս 2013 թ. | մայիս 2014 թ. | ապրիլ 2014 թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 136200 | 136200 | 136200 |
| | Ապարան | 60000 | 60050 | 60050 |
| | Թալին | 69250 | 69250 | 69250 |
| Արարատ | Արտաշատ | 100000 | 100000 | 100000 |
| | Մասիս | 115100 | 115100 | 115100 |
| | Վեդի | 102300 | 102300 | 102300 |
| | Արարատ | 88000 | 88000 | 88000 |
| Արմավիր | Վաղարշապատ | 153100 | 153100 | 153100 |
| | Արմավիր | 107000 | 107000 | 107000 |
| Գեղարքունիք | Սևան | 94800 | 94800 | 94800 |
| | Գավառ | 57100 | 57100 | 57100 |
| | Մարտունի | 96000 | 96100 | 96100 |
| | Վարդենիս | 41000 | 41000 | 41000 |
| | Ճամբարակ | 31100 | 31100 | 31100 |
| Լոռի | Վանաձոր | 100000 | 100000 | 100000 |
| | Ստեփանավան | 90000 | 90000 | 90000 |
| | Սպիտակ | 114000 | 114000 | 114000 |
| | Ալավերդի | 50200 | 50200 | 50200 |
| | Տաշիր | 51900 | 51900 | 51900 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Թումանյան | 12000 | 12000 | 12000 |
| | Շամլուղ | 14000 | 14000 | 14000 |
| | Ախթալա | 30000 | 30000 | 30000 |
| Կոտայք | Աբովյան | 157000 | 157000 | 157000 |
| | Նոր Հաճն | 129800 | 129800 | 129800 |
| | Բյուրեղավան | 120500 | 120500 | 120500 |
| | Եղվարդ | 116100 | 116100 | 116100 |
| | Հրազդան | 82600 | 82600 | 82600 |
| | Ծաղկաձոր | 305000 | 305000 | 305000 |
| | Չարենցավան | 83000 | 83000 | 83000 |
| Շիրակ | Գյումրի | 118500 | 118500 | 118500 |
| | Արթիկ | 63100 | 63100 | 63100 |
| | Մարալիկ | 52000 | 52000 | 52000 |
| Սյունիք | Գորիս | 130000 | 130000 | 130000 |
| | Կապան | 100000 | 100000 | 100000 |
| | Սիսիան | 96500 | 96500 | 96500 |
| | Մեղրի | 84500 | 84500 | 84500 |
| | Ագարակ | 46900 | 46900 | 46900 |
| | Դաստակերտ | 11610 | 11610 | 11610 |
| Վայոց ձոր | Վայք | 90000 | 90050 | 90050 |
| | Եղեգնաձոր | 116600 | 116600 | 116600 |
| | Ջերմուկ | 131200 | 131300 | 131300 |
| Տավուշ | Դիլիջան | 113000 | 113000 | 113000 |
| | Իջևան | 123100 | 123200 | 123200 |
| | Բերդ | 60000 | 60100 | 60100 |
| | Նոյեմբերյան | 48200 | 48300 | 48300 |
| | Այրում | 36200 | 36250 | 36250 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ$^2$ մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2013 թվականի մայիսի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2014 թվականի մայիսին հանրապետությունում օտարվել է 1688 միավոր (761.31 հա) հող, որից Երևանում՝ 122 միավոր (9.33 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 946 միավոր (694.29 հա), որից Երևանում՝ 9 միավոր (2.55 հա),
- բնակելի կառուցապատման հողեր՝ 475 միավոր (34.06 հա), որից Երևանում՝ 65 միավոր (2.43 հա),
- հասարակական կառուցապատման հողեր՝ 161 միավոր (9.21 հա), որից Երևանում՝ 47 միավոր (4.34 հա),
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 14 միավոր (19.66 հա), որից Երևանում՝ 1 միավոր (0.01 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 4 միավոր (2.15 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 88 միավոր (1.94 հա) ընդհանուր մակերեսով:

2014 թվականի մայիսին հանրապետությունում օտարված հողերից 1507 միավորի (701.34 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 99 միավոր (7.11 հա), նվիրատվության գործարքներ՝ 178 միավորի (59.67 հա), որից Երևանում՝ 23 միավոր (2.22 հա) և փոխանակության գործարքներ՝ 3 միավորի (0.30 հա):

Հանրապետությունում 2014 թվականի մայիսին, 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 64.3%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 96.4 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 23.3 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 26.3 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Սյունիքի մարզում՝ 964.12 հա, որից 10.99 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 28.0 %-ը կամ 422 միավորը (107.65 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 39 միավոր (1.92 հա), իսկ 71.3 %-ը կամ 1074 միավորը (593.65 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 60 միավոր (5.19 հա): 2014 թվականի մայիսին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 11 գործարք (0.04 հա):

Ստորև ներկայացվում է 2014 թվականի մայիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

| | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող | | | | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղ. նշանակության հողեր | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Գյուղ. նշանակության հողեր | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապատ. հողեր | | | | | | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապատ. հողեր | |
| | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) |
| Երևան | 0 | 0.00 | 1 | 0.01 | 17 | 0.20 | 21 | 1.71 | 6 | 1.66 | 0 | 0.00 | 32 | 1.58 | 22 | 1.95 |
| Արագածոտն | 16 | 8.18 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 3 | 0.03 | 69 | 43.32 | 0 | 0.00 | 27 | 2.39 | 2 | 0.23 |
| Արարատ | 9 | 10.04 | 5 | 18.51 | 87 | 4.66 | 15 | 0.62 | 73 | 30.88 | 1 | 0.03 | 52 | 4.43 | 5 | 0.04 |
| Արմավիր | 4 | 1.73 | 1 | 0.02 | 0 | 0.00 | 2 | 0.06 | 102 | 207.06 | 1 | 0.08 | 36 | 3.45 | 4 | 0.05 |
| Գեղարքունիք | 2 | 0.03 | 1 | 0.16 | 19 | 0.99 | 11 | 0.10 | 11 | 21.56 | 0 | 0.00 | 13 | 1.64 | 1 | 0.02 |
| Լոռի | 2 | 0.16 | 0 | 0.00 | 3 | 0.01 | 7 | 0.21 | 320 | 119.15 | 0 | 0.00 | 8 | 0.76 | 0 | 0.00 |
| Կոտայք | 28 | 37.02 | 1 | 0.24 | 14 | 1.24 | 30 | 0.65 | 86 | 48.14 | 1 | 0.52 | 73 | 6.49 | 7 | 0.47 |
| Շիրակ | 1 | 1.00 | 0 | 0.00 | 3 | 0.04 | 1 | 0.004 | 25 | 36.61 | 0 | 0.00 | 8 | 0.77 | 2 | 0.13 |
| Սյունիք | 1 | 10.00 | 2 | 0.10 | 2 | 0.03 | 2 | 1.00 | 44 | 45.50 | 0 | 0.00 | 4 | 0.21 | 1 | 0.03 |
| Վայոց ձոր | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.07 | 2 | 0.30 | 3 | 2.20 | 0 | 0.00 | 2 | 0.26 | 2 | 0.04 |
| Տավուշ | 2 | 5.62 | 0 | 0.00 | 9 | 0.32 | 8 | 0.57 | 21 | 9.48 | 0 | 0.00 | 5 | 0.32 | 3 | 0.17 |
| Ընդամենը | 65 | 73.78 | 11 | 19.04 | 155 | 7.56 | 102 | 5.25 | 760 | 565.56 | 3 | 0.63 | 260 | 22.30 | 49 | 3.13 |

Ստորև ներկայացված է 2014 թվականի մայիսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

| | Ուղղակի վաճառք | | | | | | | | Վաճառք աճուրդով | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | Արդյունա-բերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Ընդամենը | | Գյուղ. նշանա-կության հողեր | | Արդյունա-բերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր | | հասարակա-կան կառու-ցապ. հողեր | | | | | | | | բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր | | հասարակա-կան կառու-ցապ. հողեր | |
| | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) |
| Երևան | 28 | 1.63 | 1 | 0.01 | 16 | 0.17 | 11 | 1.45 | 11 | 0.28 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.03 | 10 | 0.25 |
| Արագածոտն | 1 | 0.0003 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.0003 | 15 | 5.94 | 13 | 5.91 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 2 | 0.03 |
| Արարատ | 2 | 0.01 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 2 | 0.01 | 114 | 33.82 | 9 | 10.04 | 5 | 18.51 | 87 | 4.66 | 13 | 0.61 |
| Արմավիր | 1 | 0.01 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.01 | 6 | 1.80 | 4 | 1.73 | 1 | 0.02 | 0 | 0.00 | 1 | 0.05 |
| Գեղարքունիք | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 33 | 1.28 | 2 | 0.03 | 1 | 0.16 | 19 | 0.99 | 11 | 0.10 |
| Լոռի | 4 | 0.11 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 4 | 0.11 | 8 | 0.28 | 2 | 0.16 | 0 | 0.00 | 3 | 0.01 | 3 | 0.11 |
| Կոտայք | 1 | 0.07 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.07 | 71 | 38.47 | 27 | 36.41 | 1 | 0.24 | 14 | 1.24 | 29 | 0.58 |
| Շիրակ | 2 | 0.02 | 0 | 0.00 | 2 | 0.02 | 0 | 0.00 | 3 | 1.02 | 1 | 1.00 | 0 | 0.00 | 1 | 0.02 | 1 | 0.004 |
| Սյունիք | 3 | 0.0304 | 0 | 0.00 | 2 | 0.03 | 1 | 0.0004 | 4 | 11.10 | 1 | 10.00 | 2 | 0.10 | 0 | 0.00 | 1 | 1.00 |
| Վայոց ձոր | 1 | 0.003 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.003 | 2 | 0.37 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.07 | 1 | 0.30 |
| Տավուշ | 2 | 0.32 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 2 | 0.32 | 17 | 6.18 | 2 | 5.62 | 0 | 0.00 | 9 | 0.32 | 6 | 0.24 |
| **Ընդամենը** | **45** | **2.20** | **1** | **0.01** | **20** | **0.22** | **24** | **1.97** | **284** | **100.54** | **61** | **70.90** | **10** | **19.03** | **135** | **7.34** | **78** | **3.27** |

2014 թվականի մայիսին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 4 գործարք (2.88 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2014 թվականի մայիսին, 2013 թվականի մայիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 78.9 %-ով: Ընդ որում, Երևանում աճել է 83.3 %-ով, իսկ մարզերում՝ 78.7 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 69.4 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 3.4 անգամ, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 6.8 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ մնացել է անփոփոխ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի մայիսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակ | Մակերես (հա) | պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակ | Մակերես (հա) | շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 12 | 4.91 | 126.4 | 858.5 | 581.5 | 53 | 28.10 | 365.0 | 12000.0 | 3573.0 |
| Ապարան | | | | | | 6 | 5.42 | 86.5 | 2727.3 | 700.0 |
| Թալին | 1 | 1.00 | 261.5 | 261.5 | 261.5 | 6 | 5.68 | 93.6 | 5494.5 | 721.5 |
| Ծաղկահովիտ | | | | | | 2 | 3.34 | 79.5 | 1000.0 | 305.2 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 1 | 0.45 | 5166.7 | 5166.7 | 5166.7 | 33 | 11.10 | 335.1 | 10833.3 | 2596.0 |
| Մասիս | 6 | 7.39 | 78.9 | 201.0 | 133.7 | 19 | 8.97 | 200.0 | 11904.8 | 2897.6 |
| Վեդի | 2 | 2.20 | 260.0 | 515.0 | 387.5 | 21 | 10.80 | 207.0 | 10795.1 | 1785.4 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 4 | 1.73 | 60.6 | 2221.8 | 1680.2 | 50 | 25.51 | 294.3 | 9090.0 | 1225.1 |
| Բաղրամյան | | | | | | 12 | 144.10 | 90.6 | 2561.1 | 811.3 |
| Վաղարշապատ | | | | | | 37 | 36.22 | 444.4 | 11764.7 | 2050.0 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | | | 199.8 | 1875.0 | 432.2 |
| Ճամբարակ | | | | | | 2 | 0.17 | 60.5 | 953.3 | 355.2 |
| Մարտունի | 2 | 0.03 | 1182.5 | 1455.7 | 1319.1 | 3 | 1.67 | 51.1 | 2850.0 | 763.5 |
| Սևան | | | | | | 1 | 1.20 | 52.2 | 2134.8 | 328.5 |
| Վարդենիս | | | | | | 5 | 18.53 | 41.2 | 2575.1 | 396.3 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | | | | | | 13 | 5.98 | 170.4 | 6424.2 | 585.7 |
| Գուգարք | | | | | | | | 234.6 | 6065.9 | 808.6 |
| Սպիտակ | 1 | 0.05 | 2553.0 | 2553.0 | 2553.0 | | | 250.0 | 5555.5 | 720.0 |
| Ստեփանավան | 1 | 0.11 | 706.2 | 706.2 | 706.2 | 6 | 2.50 | 90.6 | 1686.6 | 345.4 |
| Տաշիր | | | | | | 301 | 110.68 | 45.3 | 1384.4 | 180.0 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 6 | 5.88 | 175.0 | 1608.9 | 1073.3 | 47 | 25.21 | 279.3 | 11942.7 | 4015.0 |
| Եղվարդ | 19 | 29.17 | 148.5 | 636.8 | 541.9 | 20 | 14.71 | 174.4 | 11971.8 | 2412.0 |
| Հրազդան | 2 | 1.36 | 261.4 | 450.0 | 355.7 | 8 | 5.94 | 130.5 | 10256.4 | 1370.0 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | | | | | | 9 | 10.51 | 252.0 | 1693.1 | 650.7 |
| Ամասիա | | | | | | 4 | 15.98 | 40.9 | 261.0 | 129.0 |
| Անի | 1 | 1.00 | 105.0 | 105.0 | 105.0 | 8 | 6.61 | 110.6 | 546.9 | 418.8 |
| Աշոցք | | | | | | | | 58.5 | 215.8 | 134.2 |
| Արթիկ | | | | | | 4 | 3.51 | 79.4 | 1428.6 | 456.0 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | | | 92.6 | 1023.2 | 742.5 |
| Կապան | | | | | | 4 | 3.86 | 120.0 | 841.6 | 380.0 |
| Մեղրի | 1 | 10.0 | 53.0 | 53.0 | 53.0 | 1 | 0.23 | 193.0 | 3000.0 | 748.3 |
| Սիսիան | | | | | | 39 | 41.41 | 46.3 | 1977.4 | 552.0 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | | | | | | 3 | 2.20 | 125.0 | 10000.0 | 1950.0 |
| Վայք | | | | | | | | 58.8 | 1430.7 | 655.5 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 8 | 2.49 | 213.3 | 3783.8 | 700.0 |
| Իջևան | 2 | 5.62 | 165.0 | 1100.0 | 632.5 | 11 | 6.61 | 267.5 | 9454.5 | 1281.5 |
| Նոյեմբերյան | | | | | | 2 | 0.38 | 46.7 | 7368.4 | 940.0 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի մայիսին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակ | Մակերես (մ²) | պայմանագրային գները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակ | Մակերես (մ²) | շուկայական գները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | | | | | | 27 | 23928.0 | 130.7 | 22200.0 | 2583.1 |
| Ապարան | | | | | | | | 124.1 | 609.6 | 390.0 |
| Թալին | | | | | | | | 63.2 | 1454.8 | 152.3 |
| Ծաղկահովիտ | | | | | | | | 60.0 | 214.3 | 93.0 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 2 | 2358.0 | 413.3 | 828.2 | 620.7 | 13 | 11740.0 | 173.9 | 7140.3 | 903.5 |
| Մասիս | 84 | 43262.2 | 149.5 | 1525.9 | 1462.0 | 26 | 17475.3 | 187.5 | 25000.0 | 1228.0 |
| Վեդի | 1 | 1000.0 | 154.0 | 154.0 | 154.0 | 13 | 15063.0 | 126.1 | 5000.0 | 664.2 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | | | | | | 15 | 15309.0 | 131.6 | 9090.9 | 1216.0 |
| Բաղրամյան | | | | | | 3 | 2696.6 | 100.0 | 833.3 | 240.0 |
| Վաղարշապատ | | | | | | 18 | 16509.0 | 197.4 | 26528.4 | 1532.3 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 2 | 1240.0 | 186.6 | 1084.3 | 684.3 |
| Ճամբարակ | | | | | | 1 | 223.0 | 71.3 | 2286.2 | 148.1 |
| Մարտունի | 3 | 2696.0 | 188.2 | 382.4 | 254.6 | 8 | 10570.0 | 119.3 | 5000.0 | 290.0 |
| Սևան | | | | | | | | 240.0 | 3110.4 | 325.0 |
| Վարդենիս | 16 | 7215.2 | 770.0 | 770.0 | 770.0 | 2 | 4384.0 | 72.5 | 987.2 | 150.0 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | | | | | | 2 | 1700.0 | 114.3 | 1388.9 | 217.4 |
| Գուգարք | | | | | | 3 | 658.0 | 77.9 | 14083.3 | 1264.0 |
| Սպիտակ | | | | | | 3 | 5270.0 | 104.9 | 1348.3 | 207.6 |
| Ստեփանավան | | | | | | | | 88.2 | 1666.7 | 175.5 |
| Տաշիր | 3 | 135.4 | 351.5 | 360.7 | 355.0 | | | 45.3 | 400.0 | 90.0 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 5 | 4550.0 | 499.3 | 1507.5 | 957.8 | 32 | 25937.4 | 264.5 | 35353.5 | 2045.0 |
| Եղվարդ | 8 | 7113.4 | 656.2 | 1490.0 | 1230.2 | 35 | 32077.4 | 173.6 | 27000.0 | 2882.4 |
| Հրազդան | 1 | 690.0 | 1428.3 | 1428.3 | 1428.3 | 5 | 5880.0 | 117.7 | 34848.5 | 1321.7 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | | | | | | 4 | 5154.0 | 113.6 | 18750.0 | 335.7 |
| Ամասիա | | | | | | | | 45.3 | 274.7 | 71.0 |
| Անի | | | | | | | | 67.9 | 180.6 | 183.0 |
| Աշոցք | | | | | | | | 40.8 | 144.0 | 65.0 |
| Արթիկ | 1 | 200.0 | 160.0 | 160.0 | 160.0 | 4 | 2560.0 | 111.8 | 5000.0 | 218.2 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 1 | 1040.0 | 112.2 | 1700.0 | 369.3 |
| Կապան | | | | | | 3 | 1018.8 | 67.9 | 2638.9 | 317.2 |
| Մեղրի | | | | | | | | 68.5 | 632.9 | 222.5 |
| Սիսիան | | | | | | | | 123.5 | 875.0 | 223.0 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | | | | | | 2 | 2590.0 | 96.7 | 7659.6 | 510.0 |
| Վայք | 1 | 683.7 | 860.0 | 860.0 | 860.0 | | | 120.7 | 1448.3 | 238.5 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | | | 75.8 | 810.0 | 121.5 |
| Իջևան | 6 | 2366.9 | 580.8 | 3000.0 | 2324.5 | 4 | 2644.5 | 74.1 | 14423.1 | 535.0 |
| Նոյեմբերյան | 3 | 850.4 | 891.3 | 2199.2 | 1327.5 | 1 | 563.6 | 125.0 | 1948.1 | 232.0 |

2014 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 641 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.6 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 69.0 %-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2014 թվականի մայիսին, 2014 թվականի ապրիլի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 6.1 %-ով, իսկ 2013 թվականի մայիսի համեմատ՝ աճել 15.3 %-ով:

2014 թվականի մայիսին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 37 բնակարանի, 72 անհատական բնակելի տան, 285 հասարակական, 59 արտադրական նշանակության օբյեկտի, 171 հողի և 17 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2014 թվականի մայիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 7 վարձակալության գործարքի քանակը 2014 թվականի ապրիլի համեմատ նվազել է 12.5 %-ով, իսկ 2013 թվականի մայիսի համեմատ՝ աճել 75.0 %-ով : 2014 թվականի մայիսին հանրապետությունում վարձակալված 826.73 հա հողերից 0.04 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 826.36 հա հողերից 762.99 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 20.47 հա

արդյունաբերական օբյեկտների, 0.12 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 519.65 հա, որից 498.11 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1946 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 10.8 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2014 թվականի ապրիլի համեմատ, նվազել է 20.1 %-ով, իսկ 2013 թվականի մայիսի համեմատ՝ աճել 20.4 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (54.3 %), անհատական բնակելի տների (24.7 %), հասարակական նշանակության օբյեկտների (10.5 %) և հողերի (5.2 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1105 գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2014 թվականի ապրիլի համեմատ նվազել է 19.6 %-ով, իսկ 2013 թվականի մայիսի համեմատ՝ աճել 51.6 %-ով:

2014 թվականի մայիսին հանրապետությունում գրավադրվել է 52.80 հա հող, որից 5.91 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 79.8 %-ը կամ 42.14 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.06 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 17.43 հա, որից 17.09 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի մայիսին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 179 գործարք: 2014 թվականի մայիսին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2014 թվականի ապրիլի համեմատ, նվազել է 24.8 %-ով, իսկ 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 30.7 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 134 գործարք, որը 2014 թվականի ապրիլի համեմատ նվազել է 6.3 %-ով, իսկ 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 65.4 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2014 թվականի ապրիլի համեմատ, նվազել է 52.6 %-ով, իսկ 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 19.6 %-ով:

2014 թվականի մայիսին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 1897 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2014 թվականի ապրիլի համեմատ, նվազել է 5.0 %-ով, իսկ 2013 թվականի մայիսի համեմատ՝ աճել 32.7 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 10.6 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կոտայքի մարզում (20.1 %):

**ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**